# Հաշվետվություն

## տնօրենի ՄԿԱ գծով տեղակալի

## 2022-2023 ուսումնական տարի

Գյումրու թիվ 1 ավագ դպրոցն առանձնանում է իր ուրույն աշխատաոճով, որի նպատակը անձի կայացումը, լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումն է:

Առաջին և երկրորդ կիսամյակների աշխատանքային գործունեությունս իրականացրել եմ՝ կատարելով հետևյալ աշխատանքները:

Համակարգել եմ մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները: Ակտիվ համագործակցություն եմ իրականացրել դասղեկների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների՝ տարբեր խնդիրների բացահայտման և լուծման ուղիների մշակման նպատակով: Վերահսկել եմ դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահանջների իրագործումը:

Բոլոր դասարաններում ստեղծվել են դասարանական ծնողական խորհուրդներ՝ բաղկացած 3 անդամից:

Հրավիրվել են ծնողական ժողովներ՝ աշակերտների առաջադիմության հետ կապված հարցերի քննարկման և կրթության որակի բարձրացման ուղղությամբ:

Ուստարվա սկզբին 15-օրյա ժամկետում կազմակերպվել են ծնողական ժողովներ, ընտրվել է ծնողխորհուրդների կազմը:

Կատարվել է սոցիալապես անապահով աշակերտների բացահայտում ու հաշվառում՝ ըստ դասարանների: Մշտապես ուշադրության կենտրոնում են եղել սոցիալապես անապահով և անցանկալի վարք ունեցող աշակերտները:

Ամենօրյա համագործակցություն է իրականացվել տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի և ծնողական համայնքի հետ:

Համագործակցել եմ գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Կատարվել են դասղեկական ժամերի մշտադիտարկում, դասղեկների ամենամսյա աշխատանքների, հաշվետվությունների քննարկումներ:

Իրականացվել են դասալսումներ՝ դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով:

Կատարվել է մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում:

Կատարվել են խորհրդակցություններ դասալսումների վերլուծության համար: Մշակվել են դասալսման ռուբրիկներ և մատրիցաներ:

Աշխատանք եմ տարել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել եմ դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը:

Աշակերտները ծանոթացել են դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահանջներին:

Տարբեր հանդիպումների և քննարկումների միջոցով աշակերտների մոտ դաստիարակվել է ուսման նկատմամբ դրական վերաբերմունք, աշխատասիրություն, կարգապահություն: Վերահսկվել է դասղեկների աշխատանքային պլանների մշակման և հաստատման ներկայացնելու գործընթացը:

Ամենօրյա աշխատանքի միջոցով ապահովվել է աշակերտների արտաքինի, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը:

Աշակերտներին ներկայացվել է դպրոցի կանոնադրությունը, իրենց իրավունքներն ու պարտականությունները, նրանց մեջ դաստիարակվել է իրենց իրավունքներից ու պարտականություններից օգտվելու կարողություն:

Աշխատանք է տարվել աշակերտների վարքի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:

Վերահսկվել և գնահատվել է աշակերտների առաջադիմությունը և բացակայությունները:

Համագործակցել եմ տարբեր դպրոցների գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Համակարգվել և իրականացվել է դպրոցի ներգրավվածությունը Իթվինինգ միջազգային ծրագրին:

Համագործակցություններ են իրականացվել հայաստանյան ու օտարերկրյա դպրոցների և միջազգային կազմակերպությունների հետ:

Իրականացվել է դպրոցի փորձառու ուսուցիչների լավագույն փորձի, դասի պլանի, նրանց կողմից ստեղծված էլեկտրոնային կրթական նյութերի տարածում պաշարների շտեմարան կայքի միջոցով:

Ստեղծվել է նորարարական գաղափարների և տեխնոլոգիաների բանկ:

Պարբերաբար իրականացվել է կրթական գործունեության վերլուծություն:

Վերահսկել է ուսուցիչների և աշակերտների մասնակցությունը կրթական տարբեր ծրագրերի:

Ապահովվել է աշակերտների մասնակցությունը մշակութային, բարեգործական նախաձեռնություններին:

2022-2023 ուսումնական տարին մեկնարկեց «Դասը վարում է տնօրենը» ձևաչափով:

Ավանդույթի համաձայն Թարգմանչաց տոնին ունեցանք Նորեկի օրհնության օր, որի ընթացքում մեր աշակերտները երդվեցին հայ քաջորդիների արյամբ սրբագործված երազանքները նպատակ դարձնելով ու տարածելով՝ շարունակել հայի ազգային գոյության հաղթերթը:

Հանդիպումներ կազմակերպվեցին ծնողական համայնքի հետ, քննարկվեցին արված գործերն ու անելիքները, միմյանցից ունեցած ակնկալիքները:

2022-20223 ուստարվա ընթացքում շարունակեցինք «Ամսվա լավագույն աշակերտ» նախաձեռնությունը:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում դպրոցն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել տարբեր գիտաժողովների և փառատոնների: Համակարգվել են կազմակերպչական և աշակերտների ներգրավվածության աշխատանքները:

Մասնակցեցինք «Երբ բացում ենք Աստվածաշունչը» խորագրով աշակերտական աշխատաժողովին:

«Այբ»դպրոցում մասնակցեցինք «Գիտության փառատոն» համադպրոցական գիտաժողովին: Գյումրու թիվ մեկ ավագ դպրոցի աշակերտներ Ալվարդ Չարխիֆալաքյանը և Լորի Մանուկյանը «Գիտության փառատոն» համադպրոցական գիտաժողովին ներկայացրին «Վիրտուալ իրականության սաղավարտների դերը կրթության մեջ» նախագիծը՝ ցույց տալով վիրտուալ փորձեր ֆիզիկայից ուսուցիչ Է. Մանուկյանի ղեկավարությամբ:

Հայաստանում առաջին անգամ անցկացվեց STARMUS փառատոնը՝ նվիրված Մարսի վրա առաջին վայրէջքի 50-ամյակին: Փառատոնն ուներ տեխնոլոգիական ուղղվածություն և միավորում էր գիտությունը, կրթությունը, արվեստն ու տեխնոլոգիաները: Մեր աշակերտները մասնակցեցին նաև այս փառատոնին:

Մեր ուսուցիչները հաջողությամբ մասնակցեցին Մանկավարժական մտքի փառատոն 2022 նախագծին:

Ուսուցիչներ Լաուրա Գրքիկյանի և Լալա Գրքիկյանի ղեկավարությամբ մասնակցություն ցուցաբերվեց «Հետազոտենք և բացահայտենք աշխարհը» խորագրով աշակերտական աշխատաժողովին, որը կազմակերպել էին ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» (ԿԶՆԱԿ) հիմնադրամը և Երևանի պետական համալսարանը:

Ամերիկահայ գիտնականների և ճարտարագետների ընկերակցության (AESA) ամենամյա գիտական 22-րդ օլիմպիադային. ունեցել ենք անվանակարգ կենսաբանությունից, պատվոգրով են պարգևատրվել խմբերի ղեկավարներ Գ. Աճիկյանը և Է. Չոմարյանը:

Մասնակցություն ենք ցուցաբերել Հայկական համադպրոցական գիտության փառատոնին:

Տնօրեն Ն. Թադևոսյանի նախաձեռնությամբ անցկացվեց «Հայը և հայկականը» աշակերտական գիտաժողովը, որը համախմբեց ամբողջ մարզի աշակերտներին: Գիտաժողովի նպատակն էր աշակերտներին ևս մեկ անգամ ճանաչելի դարձնել մեր արմատները, պահպանել հայկականը և հետևել հայապահպան գաղափարներով օժտված Մեծերի օրինակին: Շնորհակալություն տիկին Ն. Թադևոսյանին և հայագիտության մեթոդմիավորման բոլոր ուսուցիչներին աշակերտների աշխատանքները ղեկավարելու, ուղղորդելու և այս նշանակալի իրադարձությունը կյանքի կոչելու համար:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել նաև «Վազգեն Գալստյան» գիտամշակութային հիմնադրամի կողմից կազմակերպված բնագիտական օլիմպիադային: Նշենք, որ հիմնադրամը ստեղծվել է քառասունչորսօրյա պատերազմում նահատակված Վազգեն Գալստյանի հիշատակին և նպաստում է աշակերտների և ուսանողների մասնագիտական ընդունակությունների բացահայտմանը, մասնագիտական կողմնորոշմանը, առաջադիմության բարձրացմանը:

Բանավեճի ակումբի մասնակիցները ուսուցիչ Ալլա Հարությունյանի ղեկավարությամբ մասնակցել են հետևյալ թեմաներով բանավեճերին և գրանցել հաջողություններ.

- «Գնահատումը պետք է դուրս գա»
- «Ավագ դպրոցը ապահովում է որակյալ կրթություն»
- «Աշխատավարձը արդյունավետ աշխատանքի խթանիչն է»
- «ՀՀ-ն պետք է մտնի ՆԱՏՕ-ի կազմի մեջ»
- «Զենքի ազատ վաճառքն արդարացված է»

Տնտեսագիտական հոսքի աշակերտուհիներ՝ Լիզա Մալոյանն ու Ալվարդ Չարխիֆալաքյանը, առցանց մասնակցություն ցուցաբերեցին Եվրոպական տնտեսագիտական հեղինակավոր Girls Go Circular ծրագրին և գրանցեցին գերազանց արդյունքներ:

Մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցում հյուրընկալեցինք ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռաֆիկ Հակոբյանին

Հանդիպում կազմակերպվեց մաթեմատիկական գիտությունների թեկնածու Գուրգեն Ասատրյանի հետ:

Հյուրընկալեցինք «Կարին» ազգագրական պարային համույթի ղեկավար, բանահավաք, ազատամարտիկ Գագիկ Գինոսյանին

Հյուրընկալեցինք ՀՀ ոստիկանության Կումայրու բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Կարեն Գևորգյանին, պարեկային ծառայության օպերատիվ կառավարման բաժնի պետ Արթուր Սեդրակյանին, տեսուչներ Հայկ Թադևոսյանին և Տաթևիկ Վահրամյանին:

Հյուրընկալեցինք իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարտին Թադևոսյանին

Հյուրընկալեցինք Շիրակի պետական համալսարանի դասախոս, դոցենտ Մարիետա Խաչատրյանին

«Քո արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակներում հանդիպեցինք հայ ջազային երաժիշտ, սաքսոֆոնահար, գործիքավորող, կոմպոզիտոր, մանկավարժ Արմեն Հյուսնունցի հետ:

Դաս-Ա ծրագրի շրջանակներում հյուրընկալեցինք ՀՀ ԿԳՄՄՆ և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համատեղ ջանքերով մեկնարկած «ԴասԱ» ծրագրի ներկայացուցիչներին: Հանդիպման ընթացքում պատանի հանդիսատեսը ծանոթացավ դասական երաժշտության գլուխգործոցներին, համերգների ժամանակ ընդունելի վարքականոններին և համանուն հեռախոսային հավելվածին:

Ապահովվել է շրջանավարտ-աշակերտ փոխներգործուն կապ

ԹիվՄեկը արժևորելու, ընկերությունը գնահատելու, միմյանց ճանաչելու, այստեղ-ի ու հիմա-ի մասին զրույց-քննարկումը, որը վարեցին ԹիվՄեկի շրջանավարտները։ Դասը հետաքրքիր էր, զրույցը՝ անկեղծ, միջավայրը՝ ջերմ։

Աշակերտական խորհրդի հետ համագործակցությամբ անցկացվեց «Պիտի փորձենք մեր գրագիտությամբ, մեր իրազեկվածությամբ հաշտ ապրել երկրաշարժի հետ» թեմայով հանդիպումը, որի ընթացքում աշակերտները ընդգծեցին, որ մենք շատ բացեր ունենք թե՛ սեյսմակայունության, թե՛ բնակչության իրազեկման, թե՛ աղետների կառավարման տեսակետից։

Դպրոցը մասնակցություն ցուցաբերեց նաև մեդիագրագիտությանը նվիրված մրցույթին, որտեղ հանդես եկավ փաստերի ստուգման և մեդիագրագիտության կարողությունների զարգացմանն ուղղված տեխնոլոգիական լուծումներով նախագծով։

Մեդիագրագիտությանը նվիրված շաբաթվա շրջանակներում այցելություն կազմակերպեցինք «Ցայգ» մարզային հեռուստաընկերությունում։ Աշակերտներն ամրապնդեցին մեդիագրագիտության մասին իրենց գիտելիքները՝ վերահաստատելով վերջինիս կարևորությունը յուրաքանչյուրիս կյանքում։

2-րդ կիսամյակի մեկնարկը տրվեց մասնագիտական կողմնորոշմանն ուղղված տեղեկատվական և հետաքրքիր շփումներով. հյուրընկալվեցինք ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում, Շիրակի պետական համալսարանում, որտեղ աշակերտները ծանոթացան ոչ միայն մասնագիտություն ընտրելու ու որոշում կայացնելու կարևորագույն դրույթներին, այլև ուսանողներին տրվող մի շարք հնարավորությունների։ Բնագիտական հոսքի աշակերտները իրենց մասնագիտական կողմնորոշմանն ուղղված պրակտիկան անցկացրին Գյումրու բժշկական կենտրոնում։ Մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպվեց նաև այց Երևան՝ Կոնֆուցիուսի ինստիտուտի հետ համագործակցությամբ, աշակերտները մասնակցեցին Էքսպո ցուցահանդեսի և

ծանոթացան Չինաստանում գործող համալսարանների կրթական ծրագրերին և առաջարկներին:

Համագործակցություններ

1.Համագործակցություն Կունֆուցիուսի ինստիտուտի հետ:

2.Համագործակցություն ֆրանկոֆոն «Խաղաղության էկրաններ» կազմակերպության հետ:

3. Հյուրընկալեցինք Գեղարվեստի ակադեմիայի դասախոս, քանդակագործ Արթուր Գևորգյանին: Նպատակը բարձր դասարանցիների աջակցությամբ 44-օրյա պատերազմում զոհված գյումրեցի նահատակներին նվիրված հուշակոթողների գրագետ հաշվառում իրականացնելն էր:

4. Հյուրընկալեցինք «Գլոբալ սուփորթ» ՍՊԸ-ի մասնագետներին: Հյուրերը ներկայացրին «Ապագա առաջնորդների ներգրավում, երիտասարդների համար հարմարվողականության հիմնախնդիրների և լավագույն փորձի վերաբերյալ թվային կրթական մոդուլի ստեղծում» դրամաշնորհային պրենզենտացիոն նյութը:

5.Հանդիպում ունեցանք հոգեբան Արմինե Գմյուրի հետ «Դեռահասությունը ներսից և դրսից» թեմայով:

6.Թիվմեկի սրահում ցուցադրվեցին դպրոցի ծնողական հանրույթի անդամ, նկարիչ Վաչագան Պողոսյանի կտավները՝ «Ոչ ցեղասպանությանը» խորագրով: Ցուցահանդեսի վերջին ակորդը եղավ աշակերտների խոհերի ներկայացումը՝ ելնելով կտավներից:

Դպրոցում իրականացվող կրթական նորարարական չափանիշների վերլուծություններից հետո դպրոցն արժանացել է «Իթվինինգ դպրոց» կոչմանը 2023-2024 ուսումական տարվա համար: Կարևորում ենք նաև համագործակցության այս

միջավայրը, որ դպրոցներին հնարավորություն է տրվում՝ իրականացնելու նախագծային աշխատանքներ, ապահովելու միջմշակութային երկխոսություն, կատարելու փորձի փոխանակում, կիսվելու գաղափարներով և զարգացնելու օտար լեզուներով հաղորդակցվելու հմտություններ:

«Ես քո զինվորն եմ, հայրենի՛ք» թեմայով ստեղծագործական շարադրությունների համաբանակային և համադպրոցական օլիմպիադայի 2 անվանակարգերում մրցանակային տեղեր զբաղեցրած 6 աշակերտներից մեկը ԹԻՎՄԵԿՅԻ ԳԱԼԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԷՐ: Պարգևատրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀպաշտպանության նախարարությունում:

Միջոցառումներ

1.Անցկացվեց միջոցառում՝ նվիրված ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱՆ:

2.Նշեցինք նաև «ԳՐՔԱԶՈՆ» ամենամյա միջոցառումը:

3.Տեառընդառաջ համադպրոցական միջոցառումը կրակի շուրջ համախմբեց բոլորին:

4.Անցկացրինք նաև գիրքը՝ զարգացման ուղի միջոցառումը, որին ներկա էին նաև հոգեբան Վարդան Պապիկյանը և բժիշկ-նյարդաբան Ժորա Բաղդասարյանը:

Համակարգել եմ նաև էլեկտրոնային ուսուցման աշխատանքները: Գյումրու թիվ 1 ավագ դպրոցը էլեկտրոնային ուսուցում է իրականացնում Արագածոտնի մարզի Վերին Սասնաշենի միջնակարգ դպրոցի, Գեղարքունիքի մարզի

Արտանիշի միջնակարգ դպրոցի, Շիրակի մարզի Ջրափիի միջնակարգ դպրոցի, Արարատի մարզի Դարակերտի միջնակարգ դպրոցի, Սյունիքի մարզի Նռնաձորի միջնակարգ դպրոցի աշակերտների համար: Ծրագրի առաքելությանը հասնելու և առարկայական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար պարբերաբար

իրականացվում է մենթորների և ուսուցիչների աշխատանքի գնահատում: Դպրոցում գործում են ուսուցիչների էլեկտրոնային ուսուցման կարողությունների զարգացմանը և մասնագիտական առաջընթացի ապահովմանն ուղղված ընթացակարգեր: Տնօրենի՝ տիկին Ն. Թադևոսյանի և մենթորների կողմից իրականացվում է փաստաթղթավորման գործընթացները կառավարելու գործընթաց: Դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանն իր մեջ ներառում է ծրագրի առաքելությանն ուղղված գործողություններ՝ ելնելով «Գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծումը էլեկտրոնային դասավանդման միջոցով» ծրագրի էլեկտրոնային ուսուցման որակի ապահովման չափանիշներից:

Դպրոցի կողմից ուսուցումն իրականացվում է՝ ելնելով Հանրակրթության պետական չափորոշչից, թեմատիկ պլաններում սահմանված են վերջնարդյունքները: Ըստ սահմանված ժամանակացույցի մենթորները իրականացնում են դասալսումներ և տրամադրում հետադարձ կապ /տե՛ս աշխատանքային ձևաթերթերը, հաշվետվությունները, թեմատիկ պլանները, փոխադարձ այցելությունների հաշվետվությունների տեսանյութերը և լուսանկարները յուրաքանչյուր մենթորի համար նախատեսված պանակներում և փորձի փոխանակման տիրույթում/:

Ծրագրի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում և հանրայնացում: Պարբերաբար իրականացվում են փոխադարձ այցելություններ, որոնց ընթացքում անցկացվում են բաց դասեր, վիկտորինաներ, լաբորատոր փորձեր, օրինակելի դասեր, զրույցներ և քննարկումներ: Պատրաստվել են ուղեցույցներ ուսուցիչների կողմից կիրառվող առցանց գործիքների վերաբերյալ, որոնք տեղադրվել են փորձի փոխանակման Teams-ի փորձի փոխանակման հարթակում /տե՛ս հղումները/:

Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ա. Գրիգորյան